

Դրամաշնորհներ նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման համար

Ղեկավար Ձեռնարկ

2022

Օգտագործված հապավումներ

«Կրթության բարելավման ծրագրի» Լրացուցիչ Ֆինանսավորում	ԿԲԾ ԼՖ
«Կրթական Ծրագրերի կենտրոն» Ծրագրերի Իրականացման Գրասենյակ	ԿԾԿ ԾԻԳ
«Կրթության բարելավում» Ծրագիր	ԿԲԾ
Հայաստանի Հանրապետություն	ՀՀ
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ԿԳՄՍՆ
Ղեկավար ձեռնարկ	ՂՁ
Մարզպետարանի կրթության վարչություն	ՄԿՎ
Վաղ մանկության զարգացում	ՎՄԶ

Բովանդակություն

Ներածություն	4
Ղեկավար ձեռնարկի նպատակը	6
Դրամաշնորհներ տրամադրելու և ընտրության գործընթացի ընդհանուր նկարագրությունը	7
Միկրոծրագրերի մասնակից կողմերի պարտականությունները	16
Միկրոծրագրերի ֆինանսավորում, հաշվետվությունների ներկայացում և վերահսկում.....	18
Գնումներ.....	22

1. Ներածություն

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակներն են՝ ստեղծել հիմքեր և բարենպաստ պայմաններ երեխայի ֆիզիկական, հոգեբանական, մտավոր զարգացման համար, նպաստել երեխայի ինքնուրույն ստեղծագործական կարողությունների, վարքագծի լիարժեք դրսևորմանը, զարգացնել երեխայի համագործակցային և սեփական կարծիքն արտահայտելու հմտությունները, ինչպես նաև երեխաներին դպրոցին նախապատրաստելուն:

Նախադպրոցական կրթությունը տարրական դպրոցում ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման հենասյունն է: Այն դրական ազդեցություն է ունենում երեխաների նախապատրաստմանը տարրական դպրոցին, և նպաստում է ուսման մեջ երեխայի առաջընթացին: Այս տեսանկյունից, նախադպրոցական կրթությունը կարելի է դիտարկել որպես նպատակային և հեռանկարային ներդրում հետագա կրթության համար:

Նախադպրոցական կրթության մատչելիությունը ՀՀ կառավարության առանցքային գերակայություններից մեկն է: Նախադպրոցական կրթության ոլորտում բարեփոխումների առաջնահերթ ուղղություններն են՝ օրենսդրական դաշտի, կառավարման համակարգի կատարելագործումը, տեխնիկակրթական բազաների բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության բարձրացումը, անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացումը:

Կառավարությունն առանձնակի կարևորվում է նախադպրոցական ավագ տարիքային խմբի՝ չորսից վեց տարեկան երեխաներին տարրական դպրոցին նախապատրաստելու խնդիրը, ինչը ապահովում է հավասար մեկնարկային պայմաններ տարրական դպրոցում ուսումը շարունակելու համար, նպաստում է ուսման մեջ առաջընթաց ունենալուն, ինչպես նաև կայուն հիմքեր է ստեղծում նրանց անձնային ու սոցիալական հմտությունների զարգացման և ձևավորման համար:

Նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը և դրանցում երեխաների ընդգրկվածության մեծացումը իրականացվում է ինչպես նախադպրոցական հաստատությունների կարողությունների ընդլայնման, այնպես էլ այլընտրանքային ոչ ծախսատար նախադպրոցական կրթության ծառայությունների ներդրման միջոցով:

Ծախսախնայող մոդելների էությունը կայանում է նրանում, որ 4-6 տարեկան երեխաների համար կազմակերպվում են կարճատև նախադպրոցական կրթության ծառայություններ (առանց տաք սննդի կամ քնելու հարմարությունների) և նրանց պատրաստում են հավասար մեկնարկային պայմաններով մտնել տարրական դպրոց: Նախադպրոցական կրթության նման ծառայության ծախսերը էապես նվազում են սովորական նախադպրոցական հաստատության ծախսերի համեմատ: Ծախսախնայող նախադպրոցական ծառայությունները կարող են տրամադրվել արդեն գործող մանկապարտեզներում/նախադպրոցական հաստատություններում:

Այն համայնքներում, որտեղ չկան կամ չեն գործում նախադպրոցական հաստատություններ/մանկապարտեզներ, նախատեսվում է հանրակրթական դպրոցներում բացել այդպիսի 1-ամյա նախադպրոցական խմբեր, որտեղ կստեղծվ համապատասխան պայմաններ երեխայի ազատ և դինամիկ շարունակական զարգացման, մտավոր, ֆիզիկական և ստեղծագործական կարողությունների լիարժեք դրսևորման համար: Արդյունքում՝ այդպիսի ծառայություններում ընդգրկված երեխաները զարգացնում են իրենց ինքնուրույն ստեղծագործական կարողությունները, ձեռք են բերում համագործակցելու և թիմային աշխատանքի հմտություններ: Ծախսախնայող նախադպրոցական ծառայության մոդելի առավելությունը կայանում է նրանում, որ այն հիմնված է գործող դպրոցների լայն ցանցի վրա և կարող է գործել բոլոր գյուղական բնակավայրերում, քանի որ գրեթե բոլոր գյուղերն ունեն դպրոցներ:

ԿԲԾ-ի իրականացման ընթացքում Հայաստանի բոլոր մարզերում և Երևան քաղաքում ստեղծվել և ներկայումս գործում են 136 նախակրթարաններ, որոնց 93 տոկոսը տեղակայված է մարզերում (հիմնականում գյուղական համայնքներում): Նախակրթարանների գերակշիռ մեծամասնությունը՝ 128 նախակրթարան ստեղծվել են դպրոցների հենքի վրա, իսկ մնացած 8-ը՝ մանկապարտեզների: Նորաստեղծ նախակրթարաններում ընդգրկված 258 դաստիարակ վերապատրաստվել է ԿԲԾ-ի շրջանակներում: Ծրագրի շրջանակներում 2015-2020 թվականների ընթացքում ստեղծված նախակրթարանները միայն իրենց գործարկման առաջին տարում ներգրավել են ընդհանուր առմամբ 3462 երեխայի՝ նախատեսված 3450-ի փոխարեն: Բացի այդ, 2015-ից մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվել է շուրջ 13580 երեխա, որը կազմել է ամեն տարի տարրական դասարան հաճախող երեխաների 5-6 տոկոսը:

Ծրագրում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների մոտ բարելավվել է վաղ զարգացման գործակիցը (ՎԶԳ): Այս ամենով հանդերձ նախադպրոցական միկրոծրագրերի և նախակրթարանների հասանելիության հետագա ընդլայնման պահանջարկը երկրում դեռևս մնում է բարձր:

Համաձայն ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի (ՀՀ կառավարության 18.08.2021թ. 1363-Ա որոշում) 4-րդ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 3-րդ «Կրթություն» կետով ամրագրված դրույթների, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով նախատեսված գործողությունները՝ «մինչև 2026 թվականը կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել 500 մանկապարտեզ և նախակրթարան՝ ապահովելով դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով», ԿԲԾ-ն ԼՖ-ով կհամաֆինանսավորի նախադպրոցական կրթության 80 միկրոծրագրեր՝ ՀՀ հեռավոր և խոցելի համայնքներում¹:

Լրացուցիչ ֆինանսավորմամբ ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվող գործողությունները կվերանայվեն՝ ներառելով մեխանիզմներ, որոնք ծրագրում կապահովեն լիարժեք ֆինանսավորման կարիք ունեցող (ծրագիրն կիրականացվի ամբողջապես դրամաշնորհային միջոցներով) համայնքների ներգրավում, համայնքների հետ հաղորդակցման աշխատանքներում տեղեկատվության տրամադրում շրջակա միջավայրի և կլիմայական փոփոխությունների նախապատրաստման և դրանց արդյուքների մեղմացման վերաբերյալ (կապված շինարարական աշխատանքների հետ՝ ներառելով նաև էներգախնայող տեխնոլոգիաների կիրառումը, ապրանքների և նյութերի ձեռք բերումը), տնօրենների լրացուցիչ վերապատրաստումների իրականացում՝ դպրոցների պահպանման (ներառյալ մաքուր տեխնոլոգիաների շահագործումը և պահպանումը), աղետների ռիսկերի կառավարման, հեռավար եղանակներով ուսուցման շարունակականության վերաբերյալ. և տեխնիկական աջակցության տրամադրում՝ շինարարական աշխատանքներում էներգաարդյունավետությունը բարձրացնող միջոցառումներն ապահովելու նպատակով:

Ենթաբաղադրիչի շրջանակներում լրացուցիչ ֆինանսավորմամբ նախատեսվում է նաև նախադպրոցական հաստատությունների հարակից տարածքներում խաղահրապարակների

¹ Ծրագիրը չի իրականացվի վիճելի տարածքներում

ստեղծումը՝ դրանով իսկ նպաստելով նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության խթանմանը:

Միկրոծրագրերը կիրականացվեն հետևյալ եղանակներով.

1. Դպրոցներում մեկ տարվա նախադպրոցական ծրագրերի իրականացում 4-ից մինչև 6 տարեկան երեխաների համար՝ ապահովելով ազատ և համակողմանի զարգացման միջավայր և կիրառելով ուսուցման երեխայակենտրոն մեթոդներ: Դպրոցներում 3.5-4 ժամյա տևողությամբ նախադպրոցական կրթական ծառայությունների կազմակերպում (առանց տաք սենդի և քնի կազմակերպման, նախաճաշը երեխաները կարող են բերել իրենց հետ):

2. Արդեն գործող նախադպրոցական հաստատություն/մանկապարտեզ հաճախող երեխաների թվի ավելացում՝ քիչ ծախսատար ծառայությունների ներդրման միջոցով.

ա/ առաջին հերթին անապահով ընտանիքների երեխաների ընդգրկմամբ՝ նոր խմբերի բացման կամ թերկումպլեկտավորված խմբերի լրացման միջոցով,

բ/ նախադպրոցական հաստատություններում 3.5 - 4 ժամ տևողությամբ նախադպրոցական կրթական ծառայությունների կազմակերպում (առանց տաք սենդի կամ երեխաները սնունդը բերում են իրենց հետ):

Հաշվի առնելով նախադպրոցական կրթության հսկայական կարևորությունն ու նշանակությունը երեխաների համակողմանի զարգացման ինչպես նաև նրանց հմտությունների և կարողությունների ձևավորման գործում, նախատեսվում է լրացուցիչ ֆինանսավորմամբ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնել հանրապետության հեռավոր և խոցելի համայնքներում;

2. Ղեկավար ձեռնարկի նպատակը

Դրամաշնորհային նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման համար մշակված Ղեկավար ձեռնարկը (այսուհետ՝ ՂՁ) վերանայվել է լրացուցիչ ֆինանսավորմամբ նախադպրոցական միկրոծրագրերի իրականացման շարունակականությունը ապահովելու նպատակով, քանի որ իրականացվող գործողությունները համահունչ են ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի առաջնահերթություններին;

ՂԶ-ն համաձայնեցվում է ՀԲ-ի հետ և հաստատվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով: ՂԶ-ն կանոնակարգում է հաստատություններին նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման նպատակով դրամաշնորհների տրամադրման մեխանիզմները, օժանդակում է միկրոծրագրի իրագործմանը, սահմանում է գործողությունների կատարման հաջորդականությունը, արդյունավետությունն ու թափանցիկությունը:

ՂԶ-ը կարգավորում է միկրոծրագրերի իրականացման գործընթացը և սահմանում է անհրաժեշտ միջոցառումների կազմակերպման հիմնական սկզբունքներն ու ընթացակարգերը: ՂԶ-ում նկարագրված ընթացակարգերը կարող են փոփոխվել և բարելավվել: Փոփոխությունները կարող են առաջարկել ծրագրի մասնակից կողմերից ցանկացածը: Յուրաքանչյուր փոփոխություն պետք է համաձայնեցվի Համաշխարհային բանկի հետ և հաստատվի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից:

3. Դրամաշնորհներ տրամադրելու և ընտրության գործընթացի ընդհանուր նկարագրությունը

«Հանրակրթության որակի բարելավում» բաղադրիչի՝ «Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթաբաղադրիչի շրջանակներում ԼՖ-ով նախադպրոցական միկրոծրագրեր կարող են իրականացվել ՀՀ մարզերի ընտրված համայնքների նախադպրոցական հաստատությունների կամ դպրոցների հենքի վրա: Միկրոծրագրերն ըստ համայնքների կարող են տարբեր լինել՝ կախված համայնքի կրթական կարիքներից, նրա մասնակցության ձևից, տարիքային խմբերի երեխաների քանակից և այլն:

Միկրոծրագրերի իրականացումն ընթանում է հետևյալ հիմնական փուլերով.

- Ուսումնասիրության իրականացում՝ բացահայտելու սոցիալապես անապահով այն համայնքները և հաստատությունները, որոնք կարող են մատուցել նախադպրոցական կրթական ծառայություններ: Կարիքների գնահատում՝ բացահայտելու այն

համայնքները, որոնք անկարող են ապահովել համաֆինանսավորում ծրագրում և հետևաբար կարիք ունեն ամբողջական ֆինանսավորման:

- Իրազեկման գործողությունների կազմակերպում:
- Հայտերի գնահատում, ընտրություն և հաստատում:
- Միկրոծրագրերի իրականացման համար դրամաշնորհների տրամադրում:
- Տեխնիկական աջակցության տրամադրում միկրոծրագրերի մշակման և իրականացման գործընթացում, ինչը կապահովի վերանորոգվող տարածքների հասանելիությունը և ներառականությունը:
- Նոր նախակրթարաններում ընդգրկված ուսուցիչների և դպրոցների տնօրենների վերապատրաստում:
- Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:

3.1 Խթանման աշխատանքների իրականացում ընտրված մարզերում

Նախադպրոցական կրթության միկրոծրագրերի մասին տեղեկատվության տարածումը համայնքներում կիրականացվի խթանման/իրազեկման աշխատանքների միջոցով՝ հիմնականում «Կրթական ծրագրերի կենտրոն» (ԿԾԿ) ծրագրերի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) աշխատակիցների կողմից, համայնքների ղեկավարների, հաստատության տնօրենների, մարզպետարանների կրթության վարչության համապատասխան աշխատակիցների և այլ շահագրգիռ անձանց մասնակցությամբ:

Համայնքներում խթանման աշխատանքները կներառեն հավաքներ, հանդիպումներ համայնքի ղեկավարների, ծնողների և շահագրգիռ կողմերի հետ, որոնց ընթացքում կներկայացվեն նախակրթարանների հնարավորությունները (նաև հատուկ կարիք ունեցող երեխաների համար), համայնքում նախադպրոցական ծառայությունների մեկնարկի առավելությունները, ինչպես նաև միկրոծրագրերի իրականացման ընթացակարգերը: Համայնքի կրթական հաստատությունների շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցման աշխատանքները կներառեն նաև շինարարական աշխատանքների հետ կապված

տեղեկատվություն և ներգրավվածություն շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության նախապատրաստման և մեղմացման վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում ՀՀ ԿԳՄՄՆ, ԿԾԿ ԾԻԳ-ի և դոնոր կազմակերպությունների աշխատակիցները կարող են այցելել հաստատություններ, հանդիպել և լրացուցիչ քննարկումներ անցկացնել տնօրենների, մանկավարժների, ծնողների և այլ շահառուների հետ:

ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից ծրագրի իրականացման մասին տեղեկատվության տարածումը կազմակերպվում է նաև ԿԾԿ ԾԻԳ-ի՝ www.cfep.am պաշտոնական կայքի միջոցով :

3.2 Միկրոծրագրերի ընտրություն և հաստատում

ՀՀ մարզերում նախակրթարանների ստեղծման կարիք ունեցող համայնքների ցանկը ԿԾԿ ԾԻԳ-ին տրամադրվում է ԿԳՄՄՆ-ի ինչպես նաև մարզպետարանների համապատասխան վարչությունների կողմից:

Միկրոծրագրերի ընտրությունը կարող է կատարվել 2 եղանակով.

- *Մրցակցային*
- *Նպատակային*

Մրցակցային եղանակով ընտրություն

Այս դեպքում մարզի համայնքների հետաքրքրված հաստատությունները միկրոծրագրերի հայտերը և կից պահանջվող փաստաթղթերը՝ սահմանված ժամկետում, ներկայացնում են ԿԾԿ ԾԻԳ:

ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակիցներն ընդունում են ներկայացրած միկրոծրագրերի հայտերը և իրականացնում են նախնական գնահատում՝ ԿԾԿ ԾԻԳ-ի տնօրենի հրամանի հիման վրա: Ներկայացված հայտը պետք է ներառի.

- դիմում՝ հայտ ներկայացնելու վերաբերյալ, նախադպրոցական կրթական ծառայության միկրոծրագրի նկարագրություն, որը ներառում է միկրոծրագրի նպատակը, խնդիրները, վիճակագրական տեղեկություններ երեխաների թվի, հաստատության ընթացիկ վիճակի մասին, տեղեկություններ համայնքի և ծնողական ներդրումների չափերի ու ձևերի, ակնկալվող արդյունքների վերաբերյալ և այլ տվյալներ,

Ներկայացված միկրոծրագրերի ընտրության ժամանակ առաջնահերթությունը տրվում է այն միկրոծրագրերին, որոնցում ավելի լավ են արտահայտված միկրոծրագրի հիմնական նպատակներին հասնելու ուղղությամբ իրականացվող գործողությունները, ապահովված են համայնքի եւ ծնողական ներդրումը, ինչպես նաև նշված են միկրոծրագրի շարունակականության ապահովման հնարավորություններն ու երաշխիքները:

Միկրոծրագրերի հայտերը գնահատվում են 1-5 բալանոց սանդղակով՝ ըստ յուրաքանչյուր չափանիշի: Վերջնական գնահատականը հաշվարկվում է բոլոր չափանիշների թվաբանական միջինով /առավելագույնը 30 միավոր/:

Ներկայացված միկրոծրագրերի հայտի գնահատումն իրականացվում է ըստ հետևյալ չափանիշների՝

ա/ Համապատասխանության չափանիշ –Այս չափանիշը ներկայացված հայտի համապատասխանությունն է միկրոծրագրի նպատակներին, խնդիրներին և նախադպրոցական կրթության զարգացման ռազմավարական ծրագրին: Նախադպրոցական ուսումնական ծրագիրը եւ չափորոշիչները հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից:

Առաջարկվող միկրոծրագիրը պետք է արտահայտի համայնքում առկա նախադպրոցական կրթության հիմնախնդիրները և կրթական կարիքները: Առաջարկվող միկրոծրագիրը պետք է հստակ առաջադրի նպատակները, խնդիրները և նկարագրի ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքները:

Բացի այդ, առաջարկվող միկրոծրագրերը ոչ միայն պետք է բարձրացնեն երեխաների պատրաստվածությունը դպրոցին, այլ նաև 4-6 տարեկան երեխաների համար ապահովեն նախադպրոցական կրթական չափորոշիչներով սահմանված նվազագույն պահանջները:

Դիտարկվելու են հետևյալ չափանիշները.

- միկրոծրագրի նպաստումը երեխաների անձնային ու սոցիալական հմտությունների զարգացման ու ձևավորման համար կայուն հիմքերի ստեղծմանը,
- երեխային դպրոցական կյանքին նախապատրաստելը, տարրական կրթության սահուն անցմանը նպաստելը,
- երեխայի կարողությունների և հմտությունների զարգացումը, մասնավորապես՝ խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրագիտության և ընդհանուր ճանաչողական

զարգացման, սոցիալական ու զգացմունքային (հուզականային) զարգացման, շարժողական և ֆիզիկական զարգացման, ինքնուրույն գործունեության տարբեր ձևերի (այդ թվում՝ ուսումնական և ստեղծագործական ունակությունների, հնարամտության, առողջ սովորությունների) զարգացման, արժեքային համակարգի հիմքերի ձևավորման, բարեկիրթ վարքի, գեղագիտական, հայրենասիրական, բնապահպանական, աշխատանքային դաստիարակության ապահովումը,

- ուսուցման նոր և արդյունավետ մեթոդների ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքները և հնարավորությունները:

բ/ Ներդրման չափանիշ

Ներդրման չափը՝ որպես ֆինանսական ռեսուրս, միկրոծրագրի ընդհանուր արժեքում պետք է լինի ապահովված, մասնավորապես՝ միկրոծրագրի ընդհանուր արժեքի 75 տոկոսը պետք է կազմի դրամաշնորհի գումարը, իսկ մնացած 25 տոկոսը՝ համայնքի և ծնողական ներդրումները:

Համայնքի և ծնողական ներդրումները պետք է ուղղվեն բանվորների և դաստիարակների վարձատրությանը:

Համայնքի և ծնողների մասնակցության ձևերը միկրոծրագրերում կարող են լինել ինչպես դրամական (ծնողներից, համայնքի անդամներից, տեղական իշխանություններից, այլ աղբյուրներից), այնպես էլ ոչ դրամական՝ (աշխատուժի ձևով): Խրախուսվում է նաև երեխաների ծնողների ներգրավումը միկրոծրագրի իրականացմանը՝ հաստատության վերանորոգման աշխատանքներում նրանց անվարձահատույց մասնակցության եղանակով:

գ/ Իրագործելիության չափանիշ

Առաջարկվող միկրոծրագիրը պետք է լինի իրականանալի, մասնավորապես պետք է՝

- միկրոծրագրում առաջ քաշած նպատակները և խնդիրները համապատասխանեն նկարագրված գործողություններին,
- առկա և պահանջվող միջոցները համապատասխանեն և բավարարեն միկրոծրագրի իրականացմանը,
- ներկայացված բոլոր գործողությունների ծախսերի նախահաշիվը լինի իրատեսական,
- ներդրումային ծախսերը համապատասխանեն միկրոծրագրի նպատակներին,

- միկրոծրագրի իրականացման ժամանակահատվածը և անհրաժեշտ միջոցները համապատասխանեն նախատեսված գործողություններին:

դ/ Շարունակականության չափանիշ

Առաջարկվող միկրոծրագրում պետք է հստակ նկարագրվեն միկրոծրագրի հետագա շարունակականության ապահովման հնարավորությունները, երաշխիքները, ֆինանսավորման աղբյուրներն ու մեխանիզմները: Համայնքի և ծնողների ներգրավումը միկրոծրագրի նախագծման, իրականացման ու վերահսկման աշխատանքներում միկրոծրագրի կենսունակության գլխավոր պայմաններից մեկն է: Միկրոծրագրի շարունակելիությունը ենթադրում է նրա գործունեության ապահովում առնվազն հետագա 3 տարիներին ապահովելով՝

- կայուն հիմքեր և նախապայմաններ ծրագրի իրականացման ավարտից հետո նախադպրոցական կրթական ծառայություններում ձեռքբերումների շարունակման ուղղությամբ,
- իրատեսական նախադրյալներ ծրագրի իրականացման ավարտից հետո հետագա ֆինանսատնտեսական գործունեությունը ծավալելու ուղղությամբ,
- անհրաժեշտ նախադրյալներ ծրագրի իրականացման ավարտից հետո հաստատությունում անկախ ֆինանսատնտեսական գործունեություն ծավալելու ուղղությամբ:

ե/ Կադրային չափանիշ

Միկրոծրագրի իրականացման գործընթացում պետք է հաշվի առնել տվյալ միկրոծրագրի իրականացման համար համապատասխան մանկավարժների, դաստիարակների և այլ մասնագետների առկայությունը, նրանց որակավորումը, միկրոծրագրում նրանց ներգրավման համապատասխանությունը, հրավիրված մասնագետների առկայությունը, միկրոծրագրում համայնքային աշխատողների ու ծնողների կամավոր ներգրավվածությունը, ինչպես նաև վարչական և ուսուցչական կազմի վերապատրաստվելու անհրաժեշտությունը:

զ/ Շահառության չափանիշ

Առաջարկվող միկրոծրագրում պետք է հստակ ներկայացվեն միկրոծրագրի շահառուների վերաբերյալ տվյալները, ինչպես նաև նկարագրվեն համայնքի ու ծնողական աջակցության ձևերը:

Որպես չափանիշներ կարող են դիտարկվել.

- միկրոծրագրի շահառու երեխաների թիվը, այդ թվում՝ սոցիալապես անապահով ընտանիքների, 44-օրյա պատերազմի արդյունքում վերաբնակեցված ընտանիքների երեխաների ընդգրկվածության տոկոսը,
- միկրոծրագրի շահառու ուսուցիչների, ծնողների, համայնքի այլ անդամների թիվը,
- մեկ երեխայի հաշվով կատարվող ծախսը,
- ծնողների և համայնքի մասնակցությունը միկրոծրագրի նախագծման, մշակման և իրականացման աշխատանքներում,
- համայնքի ներդրման ձևը և չափը, այդ թվում՝ կանխիկ գումարով ներդրման չափը միկրոծրագրի ընդհանուր արժեքի մեջ
- ծնողների ներդրման ձևը և չափը միկրոծրագրի արժեքի մեջ:

Գնահատման արդյունքում 18 և ավել միավոր ստացած հայտերի ցանկը ներկայացվում է Ծրագրի կառավարման հանձնաժողովի հաստատմանը: ԿԾԿ ԾԻԳ-ը պայմանագրեր է կնքում միայն այն հաստատությունների հետ, որոնց կողմից ներկայացված միկրոծրագրերի հայտերը հաստատվել են Հանձնաժողովի կողմից: Պայմանագրի կողմեր են հանդիսանում՝

ա. ԿԾԿ ԾԻԳ-ը

բ. Մանկապարտեզը կամ դպրոցը:

Պայմանագրի բաղկացուցիչ մասն են կազմում նաև միկրոծրագրի բյուջեն և ժամանակացույցը:

Պայմանագիրը հստակ սահմանում է կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Նպատակային ընտրություն

Ծրագիրը կաջակցի թիրախային և ռազմավարական նշանակություն ունեցող այն համայնքներին, որոնք

1. Ընդգրկված են ՀՀ Կառավարության կողմից հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ցանկում և իրավասու են ստանալ սոցիալական աջակցություն:
2. Բնակեցված են հիմնականում ազգային փոքրամասնություններով:
3. Ունեն սոցիալ-տնտեսական ցածր մակարդակ:
Համայնքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը սահմանվում է մարզպետարանների կողմից ստացված վիճակագրության հիման վրա և ներառում է հետևյալ հիմնական չափանիշները՝ (i) համայնքի բյուջեի չափը, (ii) համայնքի ընդհանուր բյուջեում կառավարության կողմից տրամադրվող սուբսիդիաների տոկոսը, (iii) գործազուրկների տոկոսը, (iv) նպաստառու ընտանիքների տոկոսը, (v) հաշմանդամների տոկոսը, (vi) կենսաթոշակառուների տոկոսը, (vii) համայնքի աղքատության մակարդակը և այլն:

Նշված համայնքներում իրականացվող յուրաքանչյուր միկրոծրագրում համայնքային և ծնողական ներդրման չափը և միկրոծրագրի արժեքը կորոշվի միկրոծրագրերի կառավարման հանձնաժողովի կողմից:

Եթե կարիքների գնահատման արդյունքում կբացահայտվեն համայնքներ, որոնք անկարող են ապահովել համաֆինանսավորում ծրագրում և կարիք ունեն ամբողջական ֆինանսավորման, ապա տվյալ համայնքներում ծրագիրը կիրականացվի ամբողջապես դրամաշնորհային միջոցներով:

3.3. Միկրոծրագրերի իրականացման ընթացքը

Միկրոծրագրի իրականացումը սկսվում է հաստատության կողմից համապատասխան հայտի մշակմամբ և ներկայացմամբ: Միկրոծրագրի հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը.

ա/ հաստատության վերաբերյալ վիճակագրական տվյալներ, մասնավորապես՝

- հաստատության տիպը,
- շենքի ֆիզիկական պայմանները և անհրաժեշտ տարածքների, այդ թվում՝ մանկական խաղահրապարակների առկայությունը,

- հաստատությունում ընդգրկված երեխաների թիվը՝ ըստ առանձին տարիքային խմբերի, հնարավորության դեպքում նաև՝ առաջիկա 3 տարվա ընդգրկվածության կանխատեսմամբ,
- աշխատողների թիվը, այդ թվում՝ ուսուցիչ-դաստիարակների թիվը,
- հաստատության հազեցվածությունը տեխնիկական միջոցներով,
- հաստատության ապահովվածությունը փափուկ և կոշտ գույքով, ուսումնադիտողական պարագաներով, ուսումնական կամ ուսուցողական նյութերով, խաղալիքներով և այլ անհրաժեշտ միջոցներով,
- ուսուցիչ-դաստիարակների կրթական մակարդակը,
- հաստատության ձեռքբերումները վերջին երեք տարիների ընթացքում և այլն:

բ/ միկրոծրագրի նկարագրությունը

- հիմնական նպատակները,
- առաջնահերթ խնդիրները, դրանց իրականացման համար ընտրված գործունեության տեսակները, սպասվելիք արդյունքները,
- միկրոծրագրի ներգործությունը նախադպրոցական հաստատության հետագա կենսագործունեության վրա,
- միկրոծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները,
- տեղեկություններ միկրոծրագիրն իրականացնող աշխատակազմի վերաբերյալ,
- շահառուների թիվը:

գ/ ֆինանսական պլանը

- միկրոծրագրի բյուջեն (նախատեսվող ծախսերը/նախահաշիվը),
- վարկային միջոցներից պահանջվող դրամաշնորհային գումարը և յուրաքանչյուր գործողության ծախսը,
- համայնքի և ծնողների ներդրման չափը և ձևերը՝ ներկայացնելով նաև համայնքի և ծնողների ներդրումների երաշխիքները,
- լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորությունը և միկրոծրագրի կայունությունը՝ Ծրագրի կողմից ֆինանսավորվող ժամանակահատվածից հետո:

դ/ Մոնիթորինգի և գնահատման մեխանիզմները

- միկրոծրագրի իրականացման տարբեր փուլերում միջանկյալ գնահատման իրականացում, ինչը հնարավորություն կտա բարելավել իրականացվող միկրոծրագրերը ինչպես նաև ծրագիրն իրականացնող կազմակերպությանը, համայնքներին, մյուս մասնակիցներին և շահառուներին կապահովի անհրաժեշտ տեղեկատվությամբ,
- յուրաքանչյուր ուսումնական տարի վաղ զարգացման գործիքների (ՎԶԳ) կիրառման միջոցով սկզբնական և վերջնական տվյալների հավաքագրում՝ շահառու և ոչ շահառու խմբերի վերաբերյալ,
- ՎԶԳ ինդեքսի համեմատություն շահառու (շահառուները մասնակից համայնքների նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածներն են) և ոչ շահառու խմբերի (նրանք, ովքեր ընդգրկված չեն մասնակից համայնքների կամ համանման համայնքների նախադպրոցական հաստատություններում) միջև,
- միավորների համեմատություն ՀԲ-ի կողմից աջակցություն ստացող նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների և այն նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների միջև, որոնք աջակցություն չեն ստանում ՀԲ ծրագրի կողմից,
- բոլոր տվյալների/ցուցանիշների սահմանում ըստ փուլերի՝ ծրագրի սկզբում և վերջում,
- ամփոփ գնահատումների իրականացում, ինչը կներառվի հաստատությունների կողմից ներկայացվող հաշվետվություններում և կնպաստի միկրոծրագրերի բարելավմանը և հաջորդող փուլերի ավելի արդյունավետ պլանավորմանը,
- Այլ պահանջվող տեղեկություններ;

Միկրոծրագրերի իրականացման պատասխանատուն միկրոծրագրի ղեկավարն է, որը հանդիսանում է տվյալ հաստատության տնօրենը:

Միկրոծրագրի ղեկավարի պարտականություններն են.

ա/ Ապահովել պայմանագրով սահմանված դրույթների կատարումը /մասնավորապես միկրոծրագրի բյուջեի և նախատեսված միջոցառումների կատարումը, հաշվետվությունների պատրաստումը և դրանց ներկայացում ԿԾԿ ԾԻԳ, և այլն/:

բ/ Ապահովել միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում հաշվապահական, ֆինանսական և միկրոծրագրին առնչվող հիմնական փաստաթղթերի պահպանումը:

գ/ Ապահովել միկրոծրագրով նախատեսված համայնքային և ծնողական ներդրումները /ոչ դրամական ներդրումների դեպքում կազմել գնահատման/կատարողական համապատասխան ակտեր/;

դ/ Գնված ապրանքները գրանցել հաստատությունում՝ ըստ սահմանված կանոնակարգերի::

ե/ Իրականացնել պայմանագրով սահմանված այլ դրույթների կատարումը:

Միկրոծրագրեր իրականացնող հաստատությունները՝ պայմանագրով սահմանված ձևերին և ժամկետներին համապատասխան, ԿԾԿ ԾԻԳ են ներկայացնում միկրոծրագրի իրականացման ծրագրային և ֆինանսական հաշվետվությունները:

3.4. Միկրոծրագրերի իրականացման սկզբունքները

Միկրոծրագիրն իրականացվում է՝ պահպանելով հետևյալ սկզբունքները.

ա/ Համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը

Միկրոծրագիրը պետք է համահունչ լինի ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի առաջնահերթություններին և համապատասխանի «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքներին, ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրահանգներին, հրամաններին, կանոնակարգերին և այլ իրավաբանական նորմատիվ փաստաթղթերին:

բ/ Արդյունավետությունը և վերահսկելիությունը

Միկրոծրագրի շրջանակներում մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսները պետք է օգտագործվեն առավելագույն արդյունավետությամբ: Միկրոծրագրի իրականացումը պետք է ուղեկցվի ընթացիկ վերահսկողությամբ (մոնիտորինգ), ինչը կապահովի միկրոծրագրով սահմանված նպատակների և պահանջների կատարումը: Մոնիտորինգը կիրականացվի ինչպես ԿԾԿ ԾԻԳ-ի, այնպես էլ համայնքի կողմից՝ ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովման նպատակով:

գ/ Որակը

Միկրոծրագրի իրականացման նպատակով պայմանագրեր կկնքվեն միայն այն հաստատությունների հետ, որոնք պարտավորվում են իրենց ծրագրերի իրականացումը, ապրանքների գնումը և ծառայությունների մատուցումը կատարել բարձր որակական չափանիշներով:

դ/ Հրապարակայնությունը

Միկրոծրագրերի իրականացման գործընթացները ՀՀ ԿԳՄՍՆ-ի, ԿԾԿ ԾԻԳ-ի, դոնոր կազմակերպությունների կողմից պետք է լինեն թափանցիկ: Թափանցիկության ապահովման և ծրագրի իրականացման վերաբերյալ պատշաճ գնահատման նպատակով, մրցույթի արդյունքների, հաղթողների ընտրության մասին տեղեկատվությունն ու ընթացիկ հաշվետվությունները կտրամադրվեն բոլոր շահագրգիռ կողմերին՝ ըստ պահանջի:

ե/ Մասնակցությունը և շարունակականությունը

Միկրոծրագիրը պետք է խրախուսի համայնքի, ծնողների լայն մասնակցությունը ծրագրի իրականացմանը (ֆինանսական, բարեգործական և աշխատուժ/ֆիզիկական մասնակցություն), ուղղված լինի ընտանիքի և համայնքի նախադպրոցական կրթության հիմնական կարիքներին, ինչպես նաև ապահովի իրականացվող միկրոծրագրի շարունակականությունը՝ վարկային ֆինանսավորումից հետո:

3.5. Միկրոծրագրերի շահառուները

Միկրոծրագրերի շահառուներ են ընտրված համայնքների նախադպրոցական տարիքի 4-6 տարեկան երեխաները, ծրագրեր իրականացնող նախադպրոցական և հանրակրթական հաստատությունները, ծնողները և համայնքների անդամները:

Ծնողները կարող են՝

- մասնակցել առաջնահերթ կարիքների հայտնաբերմանը,
- մասնակցել միկրոծրագրի հայտի մշակմանը,
- աջակցել և մասնակցել միկրոծրագրի իրականացմանը,
- ներկայացնել առաջարկություններ միկրոծրագրի առավել արդյունավետ իրականացման վերաբերյալ,

- կատարել ֆինանսական, նյութական և այլ ներդրումներ:

Դպրոցները/ նախադպրոցական հաստատությունները՝

- իրականացնում են միկրոծրագրեր,
- իրականացնում են ինքնագնահատում,
- նախապատրաստում և ներկայացնում են հաշվետվություններ,
- ապահովում են միկրոծրագրի հրապարակայնությունը համայնքում,
- կազմակերպում են շնորհանդեսներ և այլն:

3.6. Միկրոծրագրերի կառավարումը

Նախադպրոցական միկրոծրագրերի կառավարման մարմինը նախադպրոցական կրթական միկրոծրագրերի իրականացման նպատակով ստեղծված Հանձնաժողովն է, որը համակարգում է միկրոծրագրերի իրականացումը և ապահովում այդ գործընթացների թափանցիկությունը: Հանձնաժողովը ստեղծվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով: Հանձնաժողովի նախագահը ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալն է:

Հանձնաժողովի կազմը հետևյալն է.

1. ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ /նախագահ/,
2. ՀՀ ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ,
3. ՀՀ ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության աշխատակից,
4. ԿԾԿ ԾԻԳ-ի տնօրեն,
5. << ԿԶՆԱԿ>>-ի ներկայացուցիչ,
6. ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակից (ենթաբաղադրիչի ղեկավար):

Հանձնաժողովի նիստերին կիրավիրվեն նաև միկրոծրագրեր իրականացնող մարզերի կրթության վարչության ներկայացուցիչները:

Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության: Նիստերը գումարվում են նախագահի, հանձնաժողովի անդամների կամ ԿԾԿ ԾԻԳ-ի նախաձեռնությամբ: Նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի բոլոր որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Հանձնաժողովը՝

- վերահսկում է միկրոծրագրերի իրականացումը հիմք ընդունելով ՂԶ-ն ,
- ուսումնասիրում է միկրոծրագրերի գնահատման արդյունքները և հաստատում դրանք,
- առաջարկում է միկրոծրագրերի իրականացման ՂԶ-ում կատարել անհրաժեշտ փոփոխություններ,
- քննարկում և հաստատում է իրականացվող միկրոծրագրերում առաջարկվող փոփոխությունները,
- կայացնում է որոշում միկրոծրագրերի իրականացման գործընթացում առաջացած հրատապ և արտակարգ խնդիրների վերաբերյալ:

4. Միկրոծրագրերի մասնակից կողմերի պարտականությունները

Միկրոծրագրերի մասնակից կողմերն են ԿԳՄՄՆ-ն, ԿԾԿ ԾԻԳ-ը, ընտրված համայնքների ստեղծական ինքնակառավարման մարմինները, մրցույթում հաղթած հաստատությունները:

Միկրոծրագրերի իրականացմանն աջակցում են ՄԿՎ-ները (մարզպետարանի կրթության վարչություններ), ինչպես նաև միջազգային պոտենցիալ դոնոր կազմակերպությունները: Մասնավորապես Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) հետ համագործակցության շրջանակներում նախակրթարանների ստեղծման գործընթացում վերջինիս համաֆինանսավորմամբ կիրականացվեն էներգաարդյունավետությունը բարձրացնող միջոցառումներ: Ներդրումների մասնաբաժինը կկազմի մշակված նախահաշիվներում ներառված էներգաարդյունավետ միջոցառումների ընդհանուր արժեքի 20%-ից ոչ ավելի:

Միկրոծրագրերի իրականացման ընթացքում մասնակիցների գործառույթներն են.

ա/ ԿԾԿ ԾԻԳ-ը՝

- հաստատություններին տրամադրում է տեխնիկական աջակցություն միկրոծրագրեր մշակելու և իրականացնելու գործընթացում ինչը պետք է նաև ապահովի տարածքների հասանելիությունը և ներառականությունը, նախակրթարանի շենքի անվտանգ ֆիզիկական պայմանները, նախակրթարանի համար նախատեսված տարածքի վերանորոգումը և էներգաարդյունավետությունը բարձրացնող միջոցառումների իրականացումը,
- իրականացնում է ներկայացրած միկրոծրագրերի հայտերի/առաջարկների նախնական գնահատում և ներկայացնում դրանք Հանձնաժողովի հաստատմանը,
- հաստատությունների հետ կնքում է պայմանագրեր և տրամադրում ֆինանսավորում,
- կազմակերպում է հաստատությունների տնօրենների և նախակրթարաններում ընդգրկված դաստիարակների վերապատրաստում՝ նախադպրոցական հաստատության յուրաքանչյուր նորաբաց խմբից վերապատրաստելով ոչ ավել, քան 2 դաստիարակ: Վերապատրաստման մոդուլներն ու ձեռնարկները մասնագիտական նյութերից բացի պետք է ներառեն նյութեր ուղղված՝ ա) դպրոցի շենքի պահպանմանը (ներառյալ մաքուր տեխնոլոգիաների շահագործում և պահպանում, բ) ուսուցման շարունակականության ապահովմանը հիբրիդային կամ հեռավար եղանակների միջոցով (այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող սովորողների համար), համաճարակաբանական, աշխարհաքաղաքական կամ կլիմայական ցնցումների հետևանքով ստացիոնար ուսուցման խափանումների դեպքում, և գ) աղետների ռիսկերի կառավարմանը և կանխարգելմանը (այդ թվում նաև գործողություններ, ինչպիսիք են երկրաշարժերի դեպքում վարժանքներ կամ կլիմայի հետ կապված արտակարգ իրավիճակների արձագանքման դասընթացներ ուսուցիչների համար ուսումնական ողջ տարվա ընթացքում),
- վերահսկում է միկրոծրագրերի արդյունավետ իրականացումը,
- իրականացնում է նախադպրոցական կրթական հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի գնահատում:

բ/ ՄԿՎ-ները՝

- աջակցում են խթանման աշխատանքներին և տեղեկատվության տարածմանը,

- աջակցում են հաստատություններին՝ երեխաների ընդգրկվածությունն ապահովելու գործընթացում,
- հաստատություններին տրամադրում են տեխնիկական աջակցություն միկրոծրագրերի մշակման և իրականացման գործընթացում,
- մասնակցում են միկրոծրագրերի ընտրությանը և վերահսկմանը:

գ/ Տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքները)՝

- իրականացնում են համայնքների նախադպրոցական կրթության կարիքների ճշգրտում, աջակցում են հաստատություններին՝ միկրոծրագրերի առաջարկի մշակման գործընթացում,
- ապահովում են երեխաների ընդգրկումը նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատություններում,
- ապահովում են միկրոծրագրով նախատեսված ներդրումների կատարումը՝ ներառյալ շենքերի և տարածքների վերանորոգումները,
- մշակում են միկրոծրագրերի շարունակականության մեխանիզմներ և ներկայացնում առաջարկություններ,
- իրականացնում են միկրոծրագրերի լուսաբանում համայնքում:

դ/ Միկրոծրագրեր իրականացնող հաստատությունները՝

- մշակում են միկրոծրագրերի հայտերը և ներկայացնում ԿԾԿ ԾԻԳ,
- իրականացնում են միկրոծրագրագրերը և ապահովում շարունակական վերահսկողություն,
- պատրաստում և ներկայացնում են փուլային ու ամփոփիչ հաշվետվություններ միկրոծրագրի ընթացքի վերաբերյալ՝ ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից տրամադրված ձևաչափերին համապատասխան՝ ուղեկցված բոլոր հիմնավորող փատաթղթերով:

5. Միկրոծրագրերի ֆինանսավորում, հաշվետվությունների ներկայացում և վերահսկում

Միկրոծրագրի ընդհանուր արժեքի 75 տոկոսը պետք է կազմի դրամաշնորհի գումարը, իսկ մնացած 25 տոկոսը՝ համայնքի/ ծնողական ներդրումները: Դրամաշնորհի առավելագույն չափը չի կարող գերազանցել 15.000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամը՝ հաշվարկված հայտի ներկայացման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված միջին

փոխարժեքով: Միկրոծրագիրը ամբողջապես դրամաշնորհային միջոցներով /առանց համայնքի/ծնողական ներդրման/ իրականացնելու դեպքում դրամաշնորհի առավելագույն չափը չի կարող գերազանցել 20.000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամը՝ հաշվարկած հայտի ներկայացման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված միջին փոխարժեքով:

Դրամաշնորհային միջոցները հիմնականում պետք է ուղղվեն տարածքի վերանորոգմանն ու բարեկարգմանը, գույքով և սարքավորումներով համալրման աշխատանքների իրականացմանը, ուսումնական ու ուսուցողական նյութերի (գրքեր, խաղալիքներ, ուսուցողական նյութեր, ռեբուսներ, մեծ խաղալիքներ դերային խաղերի համար և այլն) ձեռքբերմանը:

Միկրոծրագրերի իրականացման ընթացքում հաստատություններից պահանջվում է կատարել ներդրումներ՝ դրամաշնորհի բյուջեին համապատասխան: Համայնքի և ծնողների ներդրումները հիմնականում պետք է ուղղվեն դաստիարակի և վերանորոգման աշխատանքներն իրականացնողների վարձատրությանը, ինչը կարող է լինել ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական /օրինակ՝ աշխատուժի ձևով/: Ոչ դրամական ներդրման չափը գնահատվում է հիմք ընդունելով շուկայական գները և ամրագրվում է հաստատության ու ծառայություն մատուցող անձի/կազմակերպության միջև կնքված պայմանագրում՝ հաստատության գնումների հանձնաժողովի հավաստմամբ:

Տրամադրվող դրամաշնորհների գումարների վճարումը շահառու հաստատությանը կատարվում է փոխանցումով՝ միկրոծրագրի համար բացված հատուկ հաշվին՝ համաձայն շահառու հաստատության և ԿԾԿ ԾԻԳ-ի միջև կնքվող պայմանագրով սահմանված դրույթների:

Դրամաշնորհի առաջին փուլի ֆինանսավորումը կատարվում է հաստատության կողմից առաջին փուլի ֆինանսավորման փոխանցման հաշիվը ներկայացնելուց հետո: Դրամային ներդրման պարագայում ֆինանսավորումը իրականացվում է հաստատության կողմից առաջին փուլի համար սահմանված համաֆինանսավորումը միկրոծրագրի համար բացված հատուկ հաշվին գումարը փոխանցելուց և փոխանցման հանձնարարագիրը ԿԾԿ ԾԻԳ ներկայացնելուց հետո: Հաջորդ փուլերի ֆինանսավորման համար հիմք է հանդիսանում աշխատանքների իրականացման և ֆինանսական հաշվետվությունների ընդունումը ԿԾԿ

ԾԻԳ-ի կողմից, ինչը ներառում է. ա/ ծրագրային հաշվետվություն՝ տվյալ փուլում միկրոծրագրի կատարված աշխատանքների վերաբերյալ, բ/ ֆինանսական հաշվետվություն հաշվետու փուլում կատարված ծախսերի վերաբերյալ:

Ձեռքբերվող ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են անկանխիկ եղանակով՝ շահառու հաստատության բանկային հաշվից փոխանցման միջոցով: Հաստատության կողմից հաշվետվությունները սահմանված ժամկետներում ԿԾԿ ԾԻԳ են ներկայացվում ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից մշակված ձևաչափերին համապատասխան: Հաստատության կողմից ներկայացվող հաշվետվությունները հաստատվում են հաստատության տնօրենի կողմից: Հաշվետվություններին կցվում է նաև միկրոծրագրի հաջորդ փուլի համար փոխանցվելիք գումարի վճարման հաշիվը:

Միկրոծրագրերի իրականացումը վերահսկվում է ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակազմի կողմից՝ ա/ հաստատությունների ներկայացրած ընթացիկ ու վերջնական հաշվետվությունների ուսումնասիրմամբ, բ/ ֆինանսական հաշվետվությունները ուղեկցող ծախսերը և վճարումները հիմնավորող փաստաթղթերի ստուգմամբ, գ/ գնումների գործընթացը հիմնավորող փաստաթղթերի ստուգմամբ:

Ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրությունը կատարվում է ԿԾԿ ԾԻԳ-ի դրամաշնորհները համակարգող մասնագետի կողմից՝ ֆինանսական և գնումների մասնագետի աջակցությամբ: ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակազմը պետք է ստուգի բոլոր հիմնավորող փաստաթղթերը, հավաստիանա, որ ծախսերն իրականացված են համաձայն պայմանագրի բյուջեի, ինչպես նաև համադրի ստուգված փաստաթղթերը ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների հետ:

Դրամաշնորհները համակարգող մասնագետի կողմից կազմվում է համապատասխան փուլի հաշվետվությունների ընդունման ամփոփաթեթ, որը լրացվում է համապատասխան մասնագետների կողմից, ընդունվում է ենթաբաղադրիչի ղեկավարի կողմից և ներկայացվում է ԿԾԿ ԾԻԳ-ի տնօրենի հաստատմանը:

Ենթաբաղադրիչի աշխատակազմը կիրականացնի նաև վերահսկողական այցեր: Այցելությունների ընթացքում կդիտարկվի դրամաշնորհային ծրագրի ընթացքը, կստուգվեն դրամաշնորհի շրջանակներում ձեռք բերված ապրանքների առկայությունը, ամբողջականությունը և համապատասխանությունը ԿԾԿ ԾԻԳ ներկայացված փաստաթղթերին:

Պահանջվող հաշվետվությունների և փաստաթղթերի չներկայացման կամ մասնակի ներկայացման, ինչպես նաև դրանց թերի ու սխալ կազմման դեպքում, ԿԾԿ ԾԻԳ-ն իրավունք ունի չընդունել կամ մասնակի ընդունել կատարված ծախսերը, ինչպես նաև պահանջել վերականգնել ոչ իրավասու ծախսերի գումարը: Հաստատության կողմից դրամաշնորհային աշխատանքների չկատարման, թերակատարման, պայմանագրից շեղումների կամ այլ էական թերացումների դեպքում ԿԾԿ ԾԻԳ-ը իրավունք ունի դադարեցնել պայմանագրային հարաբերությունները տվյալ հաստատության հետ՝ համաձայն դրամաշնորհային պայմանագրով սահմանված դրույթների:

ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից պետք է իրականացվի նաև հեռախոսային հարցում (մշակված հարցաթերթիկի հիման վրա) հատուկ կարիքներ ունեցող երեխաների ընտանիքների հետ՝ հասկանալու համար, թե արդյոք նրանց առաջնահերթությունները և կարիքները ներառված են ստեղծված նախադպրոցական հաստատություններում՝ նրանց բավարարվածությունը ծրագրից հետագայում չափելու նպատակով:

Միկրոծրագրի ավարտին շահառու հաստատությունը ներկայացնում է վերջնական հաշվետվություն և, եթե միկրոծրագրի իրականացումը համապատասխանում է կնքված պայմանագրի պայմաններին, ապա պայմանագրի կողմերը ստորագրում են համապատասխան ակտ՝ ծրագրի իրականացման և ավարտի մասին:

Միկրոծրագրի հաշվապահական հաշվառումը վարում է շահառու հաստատությունը՝ «Օրենսդրության համաձայն: Միկրոծրագրի շրջանակներում գնված հիմնական միջոցները (գույք, սարքավորումներ և այլն) մուտքագրվում են հաստատության հաշվեկշռին, որպես հաստատության սեփականություն: Շահառու հաստատությունը պետք է իրականացնի գնումների գործընթացները սահմանված կարգով և պետք է ապահովի գնված հիմնական միջոցների պատշաճ պահպանումն ու արդյունավետ օգտագործումը:

Շահառու հաստատությունը պետք է ռեսուրսները կառավարի պատշաճ կերպով եւ իրականացի հայտին համապատասխան և արդյունավետ միկրոծրագիր՝ պայմանագրային պարտավորությունների համաձայն

Շահառու հաստատությունը միկրոծրագիրը պետք է իրականացնի լրացուցիչ ֆինասավորմամբ «Կրթության բարելավում» ծրագրի «Վարկային համաձայնագրի» համաձայն

(մասնավորապես Առդիր 2, բաժին 1, գ կետի պահանջներին համապատասխան), որը հետևյալն է.

1. Վարկառուն, ի դեմս ԿԳՄՍՆ-ի, Ենթադրամաշնորհներ է տրամադրում Շահառուներին՝ Միկրոծրագրեր կամ Ենթածրագրեր ֆինանսավորելու համար՝ Բանկի համար ընդունելի համապատասխանության չափանիշների եւ ընթացակարգերի համաձայն, որոնք ավելի մանրամասն ներկայացվում են Ծրագրի գործառնական ձեռնարկում, որը պետք է ներառի հետևյալը.

ա) առաջարկվող Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը տնտեսապես, ֆինանսապես եւ տեխնիկապես իրագործելի է, էկոլոգիապես անվտանգ և իրավասու Շահառուների կողմից պետք է իրականացվի Վարկառուի կողմից ընտրված տարածքներում.

բ) առաջարկվող Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը ներառում է Ծրագրի համապատասխանաբար Ա.1(iv) Մասով կամ Բ Մասով սահմանված կառուցապատման հատուկ գործողություններից, և որը ավելի մանրամասն ներկայացվում է Ծրագրի գործառնական ձեռնարկում և համապատասխանում է Վարկառուի բոլոր կիրառելի օրենքներին ու կարգավորումներին.

գ) առաջարկվող Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը բավարարում է Ծրագրի գործառնական ձեռնարկում նշված երաշխիքների համապատասխանության չափանիշները և համապատասխանում է երաշխիքների շրջանակների եւ պահանջվող այլ երաշխիքային փաստաթղթերի դրույթներին. և

դ) եթե, Ծրագրի գործառնական ձեռնարկի համաձայն, Միկրոծրագրի կամ Ենթածրագրի համար իրականացված բնապահպանական սքրինինգի հիման վրա պահանջվի ԲՍԿՊ, ապա այդպիսի ԲՍԿՊ պետք է պատրաստվի ԲՍԿԾ-ի համաձայն և հաստատվի Բանկի կողմից:

2. Վարկառուն, ի դեմս ԿԳՄՍՆ-ի, յուրաքանչյուր Ենթադրամաշնորհ տրամադրում է համապատասխան Շահառուի հետ կնքված Ենթադրամաշնորհի մասին համաձայնագրի շրջանակներում Բանկի կողմից հաստատված և Ծրագրի գործառնական ձեռնարկում նկարագրված պայմանների համաձայն, որոնք պետք է ներառեն հետևյալը.

ա) Ենթադրամաշնորհը պետք է համապատասխանի դրամաշնորհի համար նախատեսված պայմաններին.

բ) Վարկառուն, ի դեմս ԿԳՄՍՆ-ի, կստանա համապատասխան իրավունքներ՝ պաշտպանելու իր և Բանկի շահերը, այդ թվում՝ i) Ենթադրամաշնորհային միջոցներն օգտագործելու հետ կապված իրավունքը կասեցնելու կամ դադարեցնելու Շահառուի իրավունքը, կամ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցում ստանալու Ենթադրամաշնորհի նախկինում առհանձված գումարի դիմաց, եթե Շահառուն չի կատարում Ենթադրամաշնորհային համաձայնագրով նախատեսված իր պարտավորություններից որեւէ մեկը.

գ) Վարկառուն, ի դեմս ԿԳՄՍՆ-ի, պետք է յուրաքանչյուր Շահառուից պահանջի՝

(i) իր Միկրոնախագիծը կամ Ենթածրագիրն իրականացնել պատշաճ ջանասիրությամբ եւ արդյունավետորեն և Բանկին բավարարող տեխնիկական, տնտեսական, ֆինանսական, կառավարչական, բնապահպանական եւ սոցիալական չափանիշներին եւ գործելակերպին համապատասխան, այդ թվում՝ Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթների համաձայն, որոնք կիրառելի են Վարկառուից բացի վարկային միջոցների այլ ստացողների համար,

(ii) անհրաժեշտության դեպքում անհապաղ տրամադրել այդ նպատակով պահանջվող ռեսուրսները,

(iii) գնել այն ապրանքները, աշխատանքներն ու ծառայությունները, որոնք պետք է Ենթադրամաշնորհի հաշվին ֆինանսավորել՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան,

(iv) վարել համապատասխան քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս վերահսկելու եւ գնահատելու Միկրոծրագրի կամ Ենթածրագրի առաջընթացը եւ դրանով հետապնդվող նպատակների իրականացումը Բանկի համար ընդունելի ցուցանիշների համաձայն,

(v) 1) վարել ֆինանսական կառավարման համակարգ և պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ Բանկի համար ընդունելի հաշվապահական հաշվառման կիրառվող ստանդարտների համաձայն, այնպես, ինչպես պահանջվում է Միկրոծրագրի կամ Ենթածրագրի հետ կապված գործառնությունները, ռեսուրսները եւ ծախսերն արտացոլելու համար. և 2) Բանկի կամ Վարկառուի խնդրանքով այդ ֆինանսական հաշվետվությունները աուդիտի ենթարկել Բանկի համար ընդունելի անկախ աուդիտորների կողմից՝ Բանկի համար ընդունելի աուդիտի

ստանդարտների համաձայն, և Վարկառուին եւ Բանկին պատշաճ կերպով ներկայացնել աուդիտի ենթարկված հաշվետվությունները,

(vi) Վարկառուին և Բանկին հնարավորություն ընձեռել ստուգելու Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը, դրա գործունեությունը և որեւէ վերաբերելի գրառում և փաստաթուղթ, և

(vii) պատրաստել եւ Վարկառուին եւ Բանկին տրամադրել բոլոր այն տեղեկությունները, որոնք Վարկառուն կամ Բանկը կպահանջի վերոնշյալի հետ կապված:

3. Վարկառուն, ի դեմս ԿԳՄՍՆ-ի, պետք է իրացնի յուրաքանչյուր Ենթադրամաշնորհային Համաձայնագրով նախատեսված իր իրավունքներն այնպես, որպեսզի պաշտպանի Վարկառուի եւ Բանկի շահերը եւ իրագործի Վարկի նպատակները: Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ կհամաձայնի, Վարկառուն, ի դեմս ԿԳՄՍՆ-ի, չպետք է պատվիրակի, փոփոխի, չեղյալ հայտարարի որեւէ Ենթադրամաշնորհային համաձայնագիր կամ դրա որեւէ դրույթ կամ հրաժարվի դրանից:

4. Վարկառուն, ի դեմս ԿԳՄՍՆ-ի, պետք է գնահատի, վերանայի, հաստատի եւ մշտադիտարկման ենթարկի Նախադպրոցական միկրոծրագրերը՝ Ծրագրի գործառնական ձեռնարկի եւ սույն Համաձայնագրի համաձայն:

6. Գնումներ

Բոլոր ապրանքները ձեռք են բերվում համաձայն ՀԲ-ի «Գնումների կարգավորումներ ներդրումային ծրագրերի ֆինանսավորման վարկառուների համար» թվագրված հուլիս 2016, վերանայված նոյեմբեր 2017, օգոստոս 2018 և նոյեմբեր 2020 («Կարգավորումներ»): ԿԾԿ ԾԻԳ-ը կարող է կատարել միասնական գնում և իրականացնել գնումների ամբողջ գործընթացը, եթե միանման ապրանք կամ ծառայություն պահանջվի միաժամանակ շատ հաստատությունների կողմից: Ապրանքները պետք է ձեռք բերվեն գնանշման եղանակով համաձայն վերոհիշյալ կարգավորումների 6.7 կետի: Գնանշման ժամանակ կատարվում է գների համեմատություն նվազագույնը երեք տարբեր մատակարարների կողմից ստացված գնառաջարկների միջոցով: Գնառաջարկ ներկայացնելու հրավերը /ձևը կտրվի ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից/ պետք է պարունակի ապրանքի նկարագրությունը, տեխնիկական հատկորոշիչները, քանակները, ինչպես նաև մատակարարման ժամկետը և վայրը: Գնառաջարկները պետք է

ներկայացվեն գրավոր՝ մինչև հրավերում նշված ժամկետը: Հաղթողի գնառաջարկում ներկայացված պայմանները հանդիսանում են պայմանագրի կազմման հիմք:

Գնանշման իրականացման գործողությունները.

- կազմավորել երեքից հինգ անդամներից բաղկացած գնումների հանձնաժողով;
- կազմել գնվող ապրանքների ցանկը և դրանց տեխնիկական հատկորոշիչները,
- մրցակցության բավարար մակարդակի ապահովման և պահանջվող նվազագույն երեք համապատասխանող գնառաջարկներ ունենալու նպատակով կազմել մատակարարող ընկերությունների նախնական ցուցակ: Այդ ցուցակը կազմել նախկինում ձեռք բերված փորձի, ինչպես նաև շուկայի ուսումնասիրության հիման վրա,
- ԿԾԿի կողմից տրամադրված ձևի հիման վրա կազմել հայտահրավերներ և ուղարկել դրանք մատակարարներին,
- մինչև սահմանված ժամկետի ավարտը ստանալ գնառաջարկները և գնահատել դրանք²,
- ԿԾԿ կողմից տրամադրված ձևի հիման վրա կազմել գնահատման հաշվետվություն,
- հաստատել գնահատման հաշվետվությունը և պայմանագրի շնորհումը ծրագրի ղեկավարի կողմից,
- կնքել մատակարարման պայմանագիր հաղթող կազմակերպության հետ:

Մինչև պայմանագրի կնքումը մրցույթի գործընթացը պահել գաղտնի:

Շահառու հաստատության գնումների պատասխանատուն պետք է ապահովի.

- գնումների ընթացակարգի և ժամանակացույցի պահպանումը,

² Գնային առաջարկների գնահատումը կարող է կատարվել նվազագույնը երեք մրցութային փաթեթի պահանջներին համապատասխանող գնային առաջարկների առկայության դեպքում: Եթե մրցութային փաթեթի պահանջներին համապատասխանող գնային առաջարկները երեքից պակաս են, նրանց միջև ընտրություն չի կարող կատարվել և պետք է անցկացվի մատակարարողների ավելի ընդգրկուն ցուցակով նոր գնահարցում, որպեսզի ապահովվի համապատասխանող գնային առաջարկների նվազագույն պահանջվող քանակը:

- ընթացիկ հաշվետվություններում իրականացված գնումների վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ընդգրկումը,
- գնման բոլոր փաստաթղթերի պատշաճ արձանագրությունների առկայությունը հաստատությունում,

Գնումների վերահսկումն իրականացվում է հաստատության տնօրենի կողմից:

Այլ Ծախսեր հոդված

Տվյալ հոդվածում կարող են ներառվել այն ծախսերը, որոնց արժեքը չի կարող գերազանցել միկրոծրագրի ընդհանուր արժեքի 2%-ը: Դրանք են.

- վերանորոգման աշխատանքների տեխնիկական վերահսկողությունը,
- ձեռք բերված ապրանքների տեղափոխման հետ կապված տրանսպորտային ծախսերը,
- բանկային վճարները,
- և այլ չնախատեսված ծախսեր:

«Այլ ծախսեր» հոդվածով ապրանքների և ծառայությունների ձեռք բերումը նախադպրոցական դրամաշնորհային միկրոծրագրի բյուջեից կարող է իրականացվել առանց կիրառելու ՂԶ-ում նշված գնումների ընթացակարգերը: